

ներու մէջ, Սէնտ Ուէնի պալատն իր բնակութենէն առաջ հիւրանոցի վերածեց, բարձրագոյն այցելուներու համար: Առաջին անգամ այս պալատին մէջ բնակող բարձրագոյն հիւրն եղաւ՝ 1385 թ.ին՝ մեր Լեւոն Ե Լուսինեան վերջին թագաւորը (1), ինչպէս պիտի տեսնենք վերջը:



Ե

Կիլիկիայի հայ քաղաւորութիւնը

և

մեր խնամութիւնը Լուսինեաններու հետ

Ինչպէս յայտնի է, այլ եւ այլ ժամանակներ Հայաստանէն Կիլիկիա գաղթած Հայերու բազմութիւն մը՝ մեր Բագրատունեաց հարստութեան ինչպէն երեսունվեց տարի ետքը (2), 1080 թուականին, Ռուբէն անունով քաջի մը առաջնորդութեամբ անկախ իշխանութիւն մը հիմնեցին հոն, Յոյներու ձեռքէն գրաւելով երկիրը:

Ռուբէն Ա իշխանի որդի պարոն Կոստանդին (1095–1099) իշխանութեան վերջին տարիներուն՝ Եւրոպայէն Կիլիկիա կը մտնէր նաչակիրներու առաջին խումբը (1096), որ Սուրբ Երկիրն անհաւատներու ձեռքէն ազատելու նպատակով խիստ երկար եւ տաժանելի ճամբորդութիւն մը կատարած էր: Այս առաջին արշաւախումբը, — ինչպէս նաեւ յաջորդները, — մեծ ընդունելութիւն գտաւ եւ առատ պաշար ու զրամական նպատա ստացաւ Կիլիկիայի Հայերէն (3). նոյն իսկ Կոստանդին իշխանն իր մարդիկնե-

(1) Անդ, եր. 158:

(2) Բագրատունիներու հարստութիւնը վերջ գտած է Անիի վանաւորմով եւ Գագիկ Բ-ի գերութեամբ, 1044 թուին:

(3) Michaud, *Hist. des Croisades*. Paris, 1856, հս. Ա, եր. 156: Տե՛ս նաեւ Մասթոս Ուռհայեցի, Բ սպ. եր, 259, որ կրսէ քէ «ի բազմիւրեմէն գորացն վսանգ հասանեք գորացն ի հացե եւ նեղեին ի կերակրոց»